ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

17 ապրիլի 2023թ. թիվ 325

Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ ԵՎ
Ս. ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արուս Թումանյանին, նույն վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Արտյոմ Շահվերդյանին և նույն վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանին 2023թ. ապրիլի 18-ին մեկ օրով գործուղել Լոռի Բերդ՝ աշնանացան ցորենի ցանքատարածությունների ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

17/04/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք.Վանաձոր